ԶՈՐՈՒԹՅՈՒՆ ԿԱ ՀԻՍՈՒՍ ԱՆՈՒԱՆ ՄԵՋ

THERE IS POWER IN THE NAME OF JESUS

ԳՈՐԾ. 3:1-12,15-16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գործ. 4:21-22 - 21 Որովհետեւ ամենքն էլ այն եղածի համար փառք էին տալիս
Աստուծուն։ 22 Վասնզի այն մարդը քառասուն տարուց աւելի էր. Որի վրա այս
բժշկութեան նշանը եղավ։

Մատ. 21:14-15 - 14 Եւ տաճարի մէջ կոյրեր եւ կաղեր եկան նորա մօտ եւ նա
նորանց բժշկեց։ 15 Երբոր քահանայապետները եւ դպիրները տեսան այն
հրաշքները որ արաւ, եւ այն երեխաներին էլ տաճարումն աղաղակելիս եւ
ասելիս՝ Ովսաննա Դաւիթի Որդուն, նեղացան.

ԲԱՆԱԼԻ ԽՈՍՔ.

16 Հիսուսի անուան զօրութի՛ւնը բժշկեց այս մարդուն, որին տեսնում էք եւ
ճանաչում, որովհետեւ նրա անուանը հավատաց։ Եւ Հիսուսի միջոցով եղած
հավա՛տն է, որ սրան տուեց այս առողջությունը՝ (Perfect Healing) ձեր բոլորի
ներկայութեամբ։

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ.

Գործ. 3:1-12,15-16 - 1 Պետրոսը եւ Յովհաննէսը գնում էին միասին տաճարը
կէսօրից հետո ժամը երեքի աղօթքի համար։ 2 Եւ մօրից կաղ ծնուած մի մարդ
կար, որին վերցնում էին՝ ամեն օր դնում էին տաճարի այն դռան մօտ, որ Գեղեցիկ
էր կոչվում, որպէսզի նա տաճար մտնողներից ողորմութիւն խնդրի։ 3 Երբոր նա
տեսավ Պետրոսին եւ Հովհաննէսին, որ գնում էին մտնեն տաճարը, աղաչում էր,
որ ողորմութիւն ստանա նորանցից։ 4 Պետրոսը նրան նայեց Հովհաննէսի հետ եւ
ասաց. **Մեզ նայիր**։ 5 Նա դարձավ դէպի նորանց եւ ակնկալում էր նրանցից մի բան
ստանալ։ 6 Պետրոսն էլ ասեց. Արծաթ եւ ոսկի չունեմ, բայց ինչ որ ունեմ, այն քեզ
կ՚տամ.

I. ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ՝ ՆԱԶՈՎՐԵՑՈՒ ԱՆՈՒՆՈՎԸ ՎԵՐ ԿԱՑ ԵՒ ՔԱՅԼԻ՛Ր։
IN THE NAME OF JESUS CHRIST OF NAZARETH, RISE UP AND WALK.

7 Եւ աջ ձեռքից բռնեց՝ վերկացրեց նորան. <u>Եւ շուտով ամրացան նորա ազդրերն ու
սրունքները</u>։ 8 Նա <u>վեր ցատկեց եւ սկսեց քայլել</u> ու նրանց հետ տաճար մտավ.

Գործ. 14:8-9 - 8 Սա լսեց Պողոսի խօսքերը. Նա էլ նորա վրա նայեց, եւ երբոր տեսաւ որ հաւատք ունի փրկուելու, 9 Մեծ ձայնով ասեց. Ոտներիդ վրա ուղիղ կանգնիր. Եւ նա ցատկելով՝ ման էր գալիս։

- **Եթե ուզում ես այս կյանքի փորձությունների վրաով քայլել, նայիր Հիսուսին։ Կամ նրանց ովքեր մեզանից առաջ քայլել են։**

Ես. 35:6 - 6 Այն ժամանակ ցատկեու է կաղը եղջերուի պէս. եւ համրի լեզուն օրհներգելու է. որովհետեւ անապատումը ջուրեր են բղխելու եւ ամայի տեղում՝ առուներ։

Practical Application: Walk forward to God's presence not backward.

II. ՔԱՅԼՈՒՄ ԷՐ ԵՒ ՎԱԶՎԶՈՒՄ ՈՒ ՕՐՀՆՈՒՄ ԱՍՏԾՈՒՆ։
HE WAS WALKING, LEAPING, AND PRAISING GOD.

9 Եւ ամբողջ ժողովուրդը տեսաւ նրան քայլելիս եւ Աստծուն օրհնելիս։ 10 Եւ նրան ճանաչեցին, թէ նա էր, որ նստում էր տաճարի Գեղեցիկ դռան մօտ ողորմություն ստանալու համար. Եւ լցուեցին երկիւղով եւ զարմանքով այն եղածի համար։

11 Եւ մինչ նա Պետրոսին եւ Հովհաննէսին բաց չէր թողնում, ամբողջ ժողովուրդը, զարմացած, վազեց նրանց մօտ դէպի այն բակը, որ կոչւում էր Սողոմոնի բակ։ 12 Երբոր Պետրոսը տեսավ, պատասխանեց ժողովրդին. Ով իսրայէլացի մարդիկ, ինչու էք զարմացել սորա վրա, կամ մե՞զ վրա ի՞նչու էք սաստիկ նայում, իբր թէ մենք մեր զօրութիւնով եւ քաջութիւնով արած լինինք, որ դա ման գա.

16 Հիսուսի անուան զօրութի՛ւնը բժշկեց այս մարդուն, որին տեսնում էք եւ ճանաչում,

III. ՈՐՈՎՀԵՏԵՒ ՆՐԱ ԱՆՈՒԱՆԸ ՀԱՒԱՏԱՑ։
BECAUSE HE BELIEVED IN HIS NAME

Եւ Հիսուսի միջոցով եղած հավա՛տն է, որ սրան տուեց այս առողջությունը՝ (Perfect Healing) ձեր բոլորի ներկայութեամբ։

Մար. 11:22-25 - 22 Եւ Հիսուսը պատասխանեց եւ ասեց նորանց. Աստուծո հավատքն ունեցէք։ 23 Որովհետեւ ճշմարիտ ասում եմ ձեզ, թէ ով որ այս սարին ասի՝ Վեր կաց եւ ծովն ընկիր, եւ իր սրտում չ'երկմտի, բայց հավատա՝ թէ ինչ որ ասում է՝ կ'լինի նորան, կ'լինի ինչ որ ասէ։ 24 Սորա համար ասում եմ

ձեզ թէ Ամեն ինչ որ աղօթք անելով խնդրէք, հավատացէք թէ կառնէք, եւ կլինի ձեզ։

25 Եւ որ ժամանակ որ կանգնէք՝ աղօթք անէք, ներեցէք եթէ մէկի դէմ բան ունենաք. Որպէս զի ձեր Հայրն էլ՝ որ երկնքումն է, ձեր հանցանք թողէ ձեզ։

ԱՄՓՈՓՈՒՄ

I. ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ՝ ՆԱԶՈՎՐԵՑՈՒ ԱՆՈՒՆՈՎԸ ՎԵՐ ԿԱՑ ԵՒ ՔԱՅԼԻՐ։

II. ՔԱՅԼՈՒՄ ԷՐ ԵՒ ՎԱԶՎԱԶՈՒՄ ՈՒ ՕՐՀՆՈՒՄ ԱՍՏԾՈՒՆ։

III. ՈՐՈՎՀԵՏԵՒ ՆՐԱ ԱՆՈՒԱՆԸ ՀԱՒԱՏԱՑ։

Ղուկ. 7:22-23 - 22 Եւ Հիսուսը պատասխանեց եւ ասեց նորանց, Գնացէք Հովհաննէսին պատմեցէք ինչ որ տեսաք եւ լսեցիք. որ կույրերը տեսնում են, կաղերը գնում են, բորոտները սրբվում էն, խուլերը լսում են, մեռելները հարություն են առնում, աղքատներին ավետարան է քարոզվում։ 23 Եւ երանելի է նա, որ ինձ վրա չի գայթակղիլ։